

ԽԱՒՍՔ ՀԱՒՐ ՅԱԿՈԲԱ ԾՊԱՏԵՑԻ ԻՄԱՍՏԱՎԵՐ ԳԻՏՆԱԴՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՍԹՈՎԱ ԻՄԱՑՄԱՆՑՆ

[Ս]կիզբն կենաց*, որ տուաւ նախահաւարմ՝ խաղաղութեամբ էր պսակեալ, մինչ չարն բարոյն չէր հակառակ, և այնու պայծառացեալ հրաշագեղ վայելչանաւը դրախտին: Վկայէ Մովսէս ի վեցերորդ ատորն յետ զմարդն առնելոյ, եթէ Ետես Աստուած զի բարի է (ԾԱՅ. Ա. 31): Վկայէ և աւձն, որ արտաքոյ¹ դրախտին կայր, և խաւար ընդ Եւայի, և նա ոչ փախչէր ի նմանէ, զի ոչ միայն աւձին, այլ և ամենայն անասնոց անընդունակ էր դրախտն: Զի անապականին // (139ա) միայն վայել էր անապական կեանքն, զի Աստուծոյ պատկերան մարդն² միայն ճոխանայր: Այլ յորժամ չարն զինեալ³ հակառակ բարոյն, ստաւէր սայրին սրեալ՝ զճարակող աղանդն եմոյծ, նախ ընդ լսելիսն, որովք կախարդեալք հնագիրն զգայարանաւքն⁴ մահացուցեալ տարամերժնաց յԱստուածունակն յայն երջանիկ կենացն, ապա յանասնական բարոյիցն և կենացն զուգակցեալ⁵, ոմանց վայելաւու եղեալ և յոմանց ընդ երկիրի փակեալ, որպէս աւձն թշնամութեամբ ըստ արժանի սպասէ զարշապարացն (ԾԱՅ. Գ. 15): Ի Տեառնէ իսկ հրամայեալ: Նոյնպէս և յայլ զազանացն խուսափեալ սարսէ, վկայի այս և յայնցանէ, որք խաղաղութեանն Աստուածայնոյ չոգան զկնի, որպէս և Դանիէլ ի մէջ առիծացն ոչ տիրեալ (Դան. Զ. 16), և Պատոս յիծն ոչ վնասեալ (Գործ. Ի. Հ. 3), և սուրբն Գրիգոր Հայոց Լուսատրիչն ի մէջ աւձիցն ոչ տարակուսեալ:

Եւ այլք բազումք, որոց գիտնականք տեղեակ են, և այնմ ամենայնի նախանձն⁶ առաջնորդեաց, որպէս և ասէ զիր, եթէ Նախանձու բանսարկուին եմուտ մաք յաշխարի (Խմաստ. Բ. 24), և ինքն իսկ սատանայ յաղագս նախանձու կործանեցաւ: Եւ սուր ի ձեռն ետ մարդկային բնութեանս ընդ իրեարս մարտնչել անհաջտ պատերազմաւ, զի որ զկայեան ընդ եղբարդն զինեաց ի կոփի, և ետ մոռանալ զեղբայրութեանն աղէխարշանք: Եւ մանաւանդ զբազմակարաւտ աւզնականութեանն առ ի նմանէն խնամս, ի դժնակութենէ զազանացն յարձակմանց, և կամ յայլ իրս յորս վայելեն բազմադիմի չերմագոյք խնամող եղբայրական սիրովն պարսպեալք: Նա ևս ի Յովսէփ⁷ ոչ խնայեաց եղբարցն (ԾԱՅ. Լ. 28), նախանձու մաշեալ յաղագս երազոցմ՝ կանուխ զապառնեացն ծանուցեալ զնորայն

* Բնագիրը կազմելիս հետևել ենք Բիշատակված երկու ձեռագրերին. Ա. - ՄՄ - 2966, թղ. 138թ - 143ա

Բ - ՄՄ - 3062, թղ. 212թ - 216թ, Աստվածաշնչային հիումները այս ձեռագրում հիմնականում նշված են:

¹Բ - արդաքոյ,

²Բ - մարդ,

³Բ - լինել.

⁴Ա. - սկայարամօք,

⁵Ա. - զիւգակցեալ,

⁶Բ - յա անձն,

⁷Բ - Յոսէփ,

զիառու, և տոկոսաբ պահանջել ի նոցանէ զերկրպագութիւնն⁸: Յաղագս որոյ սուլ ինչ միջոցաւ ի մահուանէ ճողովրեալ շաբու աղագս լեզիպտոս վաճառեցին, զկեալն նմա երախսիս առաջի կացուցեալ (ԾԱՅ. Լ.Ը):

Այլ Աստուած հարց նորա, որ ընդ Արքահամու ի ճաշ գաճակեցաց (ԾԱՅ. ԻԲ), և Խսահակա զամենայն իրոց չարչարանացն զիստրիդանական յալտնի տպատրելով, որպէս ասաց իսկ ինքն յԱւետարամին առ հրեայսն, եթէ Արքահամ ցամկացաւ տեսանել զար ին (Յովի. Ը. 56): Եւ ընդ Յակոբայ այրարար գիշերամարտ զաւտկակուին⁹ լեալ, մինչեւ ցառաւատն, և առ ի հարցն ապահնեալ առաքինութիւն, և ժուծկալեալ մինչեւ առաւատուն զշքնադ խորհուրդն յանունն տպատրեաց (ԾԱՅ. Լ.Բ. 24), քանզի Յակոր խարոյ կամ արժանի կոռու, որ գեղեցիկ խարեւորեամբ զթեսա խարեաց, և զոյացաւ զանդրանութիւնն և զարինութիւնն (ԾԱՅ. ԻԵ. 32-34): Եւ արժանացաւ ընդ Աստուծոյ կոռիլ, և աւրինութեանցն հասանիլ յանունն¹⁰ ճշգրտեալ իսրակիլ (ԾԱՅ. ԻԵ. 27), պահնքն Աստուածատէս, որ և զնոր խորհուրդն ինքն իսկ խտառվանի, եթէ ոչ է սա, եթէ ոչ տուն Աստուծոյ, և նոյն ինքն դուռն երկաց (ԾԱՅ. Ի.Ը. 17): Եւ անզոյ զուղեղ փայտիւրն եւ խայտախար//(139թ) իր ծննդիքն Լաքանայ ոչխարացն զխաչին և զաւազանին սուրբ խորհուրդն գուշակեաց (ԾԱՅ. Լ.Գ. 19):

Եւ յանձնամ նոյն ինքն Աստուած, սքանչելի արանցն այնոցիկ ընդ նմա, էջ և պահպանողական աշակցութեամբն պարսպեաց: Թէպէտ եւ ի կնոջ անզգամութեննէն դաւաճանեալ է երկու ամս ի բանտիմ¹¹ նուանցեալ, այլ զավատորթիւնն ամբողջ պահեալ, ոչ ծառայեցոյ Քանանու ազգին իսպառ ստրկացելոյն, որով լի էր Եզիպտոս պարաւանդեալ ամիջիքն Նոյին, որ գՔամայ զծաղըն մարգարէական ակամբ ի ծնունդն գուշակեաց: Զայս և ինքն Տէրն ասէր թէ, Որ ի փոքրու ամիրաւ է, և ի բազմին ամիրաւ է: Այլ որպէս Քամ հրապարակագուժ կամեցաւ առնել զմերկութիւն հարըն, և եղբարքն յետս յետս զնալով ձորձով ծածկեցին (ԾԱՅ. Թ. 22-23):

Նոյնպէս թէպէտ եւ ժառանգն Քամայ՝ անզգամն այն, զշքնադեղն զայն եւ զպայծառակերպն, զգեղեղէշ զերկուց սքանչելատես գունացն զինոցոյն ասեմ, և զմարմնոյն կամեցաւ մերկ կողովուս առնել, այլ նա ի հարցն առաքինութիւնն ապահնեալ, ծածուկ իսկ պահեաց և ոչ եւս ծաղրել զգեղեղկափայլ գեղոյն բարեզարդութիւնն: Յաղագս որոյ եւ Աստուած ի տեսիլս բազմադիմսն ի բանտի¹² եւ ի յարքունիս երեւեցուցեալ, թէպէտ եւ անարժանք էի՛ հրապարակագոյժ առներ, զծածկեալ զանձն Աստուածային, և հանձալ տայր ի ձեռս զքառառաշեա զլծեալ կասու արքունականս: Ընդ նմին եւ զգաւազան թագաւորութեամն տիրելով ամենայն Եզիպտոսի (ԾԱՅ. ԽԱ. 42), ի դէպ ժամու ժողովելով եւ սփուղով զցորեամն ըստ կարեաց տարացելոցն եւ աշխատելոցն յայնուիկ հացին կարաւութեամն: Մանաւանդ զիւրային ազգին պահելով զնշխար, զոր աճեցոյց ի բազմութիւն

⁸ Բ - երկրպագութիւնն,

⁹ Բ - զօտակուին,

¹⁰ Բ - յանուան,

¹¹ Ա. - բանդին,

¹² Ա. - բանդ,

անթիւ զարդար կամ անհամար ծովու աւագոց, ա՛ծ, մատոյց¹³ Մովսէսի (Ելք. ԺԴ): Եւ նա խաղաղատոյր գաւազանաւ բաժանեալ ցամաքեցոյց զանդունին, եւ եհան սքանչելեարն յանապատ: Զսիրողս կոռույն ի թիկանց կացուցեալ, մանաւանդ դաւաճանութեամբ ճանապարհին ի Անդքս ղնկալեալ զիարաւուն¹⁴ կառաւք եւ երիվարաւք իրայովքն, ամենեցեամբ խաչասաստ փայտին զերկուս լեռնաձեւ¹⁵ անդունիս յիրար հեղուսեալ, զերեզմանն զործեաց կոռուասէր ժողովոյն իրոցն առաջնորդելով մեծաւ սքանչելեար, ի տուէ ամառով¹⁶ հովանեաւ յարեգական տապոյն օժանդակեաւ, եւ զգիշերոյն անտեսութիւնն ըցածեւ հրով լուսաւորեալ՝ աստանաւը մեզ ամողար առաջնորդեսցն Մովսէս եւ Ահարոն երիցունը¹⁷ նորա, որպէս ասէ մարգարէն (Սաղմ. Ղ.Ը. 6):

Ասս հասարակաց պատուվ գուշակեաց երիցունս¹⁸ ասելով, այլ¹⁹ ահա յայտ է ի պատմութենէն, թէ Մովսէս զերագոյն Ահարոնին է, զի զնմանէ ասի. բերան ի բերան խաւսել ընդ Աստուծոյ: Եւ այլք²⁰ ի հեռաստանէ զձայն արհաւացը²¹ եւ զտեսիլս հայէին, եւ զարէնան նա էան եւ զեղչիրն աւծութեան, ուստի թագաւորքն եւ մարգարէն եւ քահանայքն աւծանէին: Ուստի՞ զԱհարոն եւ զորդիսն (140ա) նորա էաւծ ի քահանայութիւն, եւ եթէ ինձ ոչ հաւանիս հաւանեա Գրիգորի Աստուածաբանի եւ նորա անունն իսկ զքեզ պատկառեցուցէ, քանզի ասէ իսկ Առ որս բանին են պանունեալ քո բանքս: Եւ զի ի զորց սկսեաց ահաւասիկ ես ի վերա քո թշնամանոլիդ, քանզի են ոմանք որոց լսելիքն մարմաշն, որպէս արդեն իսկ տեսանեն, եւ լեզուք պիղծը²² ունայնաձայնութեամբ, եւ հակառակագիր սուտանուն զիտութեամբ, եւ ոչ պէտս բերեալք բանակոռուութեամբ:

Այսպէս եւ Պողոս կոչէ զամենայն, որ բանիքը²³ է աւելորդ եւ ընդ Վայրաքննին: Եւ զի՞նչ ասէ յերկրորդ ճառին. լսեմ, ասէ, ի նոյն ինքն ի Մովսէսէ, յորժամ հրամայեաց նմա Աստուած յոլովից ի լեառնը²⁴ կոչեցելոց²⁵, յորոց մի էր եւ Ահարոն հանդերձ որդուվը²⁶ իրովք երկոքումքը քահանայիք, իսկ այլոցն երկրապատկի հեռաստանէ հրամայացեաւ, քայց մերձենայր Մովսէս միայն, ոչ ելանել ժողովրդեանն ընդ Օմա: Եւ փոքր ինչ յառաջ քան զայս՝ զայլսն փալլատակմունքն եւ որոտմունքն եւ փողըն, եւ բովանդակ ծախեալ լեառն եւ սպանալիքն զարհուրեցուցանէին: Եւ այնպիսի արեւարաւք կային ի խոնարհ, եւ մեծ նոցա այն էր զԱստուծոյ զձայնն լսել միայն սրբեցելոցն, քայց Մովսէս ի վեր ելա-

13 Բ - չիք. մատոյց,

14 Բ - զիոնուն,

15 Բ - լեռանաձեւ+փայտիմ+,

16 Բ - ամբով,

17 Ա - իրիցունք,

18 Բ - երիցունք,

19 Բ - չիք. այլ,

20 Բ - այլք,

21 Ա - արհաւացը,

22 Բ - պիղծ,

23 Բ - բանին,

24 Բ - լեառն,

25 Բ - կոչեցելոյ,

26 Բ - որդուվքն,

ԱՅԻ, և ամպճի մերքս մտաներ եւ ընդ Աստուծոյ բնակէր, և ընդունէր ալրէնս գրատրական:

Եւ դարձեալ զիտեմ զՀեղի քահանայ, և փոքր ինչ յետոյ զՈզայ ուն, զմինն յաղագս որդոց անարդենութեան պահանջեալ դատաստան զորս յանդգնէն ի զոհսն, և այն զի ոչ ընդուներ զնոցա զամբարշտութիւնն, այլ²⁷ բազում անզամ եւ սաստէր (Ա թագ. Բ. 29-32): Եւ զմինն ի տապահակն հայել իշխեաց, որ թիւրեա ի զուարակէն՝ զնա պահեաց, բայց ինքը կորեաւ Աստուծոյ զտապահակի²⁸ Աստուծոյ սպասատրութիւնն:

Գիտեմ և ոչ յորմս տաճարին մերձենալ զգուշագոյն, և վասն այնորիկ այլոց որմոց կարաւացան արտաքուստ, և ոչ զնոյն ինքեանց զզոհս, յորոց և յորժամ: Եւ ոչ յորժամ, ոչ էր պարտ ծախել, ալնքամ եւ արժան²⁹ լինել ի սրբութիւն սրբութեանցն մերձենալ, վստահանալով ի վարագոյոն և ի քաւարանն կամ ի տապահակն, և կամ տեսանեալ ամենցուն եւ հապել: Եւ դարձեալ յալլում ճանի ասէ. ո՞վ սիրելի և պատուականդ ինձ զլուխ, և Ահարոնին այնմիկ արժանաւոր յորոյ վերա կաթէր հոգեւորա քահանայականն իւղն միհածն ի մորուսն եւ ի զգեատն (Սիմ. ԾԼԲ. 2): Ընդ է՞ր զի յոլովս հաստատել տակալին և աւժանդակեալ³⁰, կատարելով և համայն պաշտամանէս զարութեամբ հոգույն ցուպ ի մերքս դնես հոգեւորականաց գործոց, և նեցուկ, եթէ զայն զիտացիր եւ լուար, թէ ընդ Ահարոնին այնմիկ և ընդ վեպին³¹, ածանէ զեղիազար, և ի³² Թամար որդիքն Ահարոնի, քանզի զՆարատալ³³ և զԱրիուդա կամաւքն զանց առնեն³⁴ երկիւիլի անհնազանդութեան (Ղևտ. Ժ): Եւ Մովկէս վասն կիր զթեսու կացուցանէր (Բ Օրին. Լ. 9) միհնդեռով// (139թ) կենդանի էր փոխանակ արինադրի և զաւրավարի լերկիր [լերկիր Ամադեկայ ի վերա եկա]³⁵ լոց, վասն զի Ահարոն և Ովր [Եկին ի զլուխ բլրոց, և հաստատ]³⁶ էին զՃեռան³⁷ Մովկէսի ի վերա լերինն, զի Ամադէկ մերքեաց ի³⁸ խաղին ի ճեռաստանէ՝ Ակարագրեցնլովն եւ տպատրելով, թոփ ինձ լքումն կամաւոր, որպէս ոչ յոյժ ընտանեգոյն է մեզ և աւգտակար, զի ոչ արինադրակիցս առնոյր զնոսա Մովկէս, այլ աղաւտիցն աւգնական, և աշխատութեան ձեռացն նեցուկ: Եւ արդ մերքեցին զքեզ Մովկէս և Ահարոն Գրիգորի, մահաւանդ թէ Աստուծոյն բանի, հալածելով ի քեն զանամաւութեանդ անզգամութիւն, թէ

²⁷ Բ - այլ+եւ+,

²⁸ Բ - զտապահակէն,

²⁹ Բ - արժանի,

³⁰ Բ - օժանդակել,

³¹ Բ - վերին,

³² Բ - ի] զի,

³³ Բ - քանզի զՆարատալ] քան զԵզմարատու,

³⁴ Ղետ. 8.1,

³⁵ Ա ձեռագրից երևում է, որ ընդօրինակության մայր ձեռագիրն այս հատվածում ամըմթեռնելի է եղեւ: Ա ձեռագրի գրիչը նման տեղերում համապատասխան քամակի տեղ է բաց թողել՝ մտածելով բացը լուացմել այդ ընդօրինակությունից: Նման տեղերում, նետնեղով ձեռագրին, մեմբ դնում ենք ուղիղ փակագիծ և վերականգնում բացիրը Բ ձեռագրով:

³⁶ Վերականգնվում է ըստ Բ ձեռագրի:

³⁷ Բ - զՃեռու,

³⁸ Բ չիք. ի,

եր³⁹ այլ ոք եւս պիտոյ է ի ճակատ պատերազմին կոչել զոք ի սրբոցն աւծանդակեսց ի համար ի պատերազմին:

Եւ սուրբ Դիտնեսիոս, առաջադրելով ի խնդիրս յերկնային քահանայապետութեանցն ձեռնարկութեամբ, եւ զմերս ի մերժու նուանելով քահանայապետութենէ, ասէ. ըստ իս կարգ սրբազն եւ հանճար եւ ներգործութիւն առ Աստուածնատեսակն նմանութիւն, որպէս հասանելի է նմա: Եւ առ տուեալն նմա յԱստուծոյ լուսափայլութիւնս համեմատաբար յԱստուածանմանց կոյս համբարձեալ, անխառն է բոլորովիմբ ամենալն նմանութեամբ, եւ հաղորդեցուցիչ ըստ արժանաւորութեանց իրաքանչիր ումէք, ինքանն⁴⁰ լուսոյն: Եւ դարձեալ, ոչ էր⁴¹ արժան սրբազնիցն կատարողաց կամ սրբազնա[.....] ներգործել բնակին, ասելի զյիր կատարողապետութեան սրբազն կարգաց յայտնաբանութեամբ թուի ասացեալսս, թէ քահանայապէտն Աստուծոյ նման է որպէս մարդոյ, մարթ է նմանել եւ հասանել: Եւ առ տուեալն նմա շնորհ յԱստուծոյ, այլ ոչ պարզեւել, որ ոչ են նման նմա, ոչ կարեն ընդ նմա ներգործել, որ ինչ նմա անզնէ, եւ ասեմք. ասէ, զի ըստ ամենայն սրբազն զարդուն գերազանցագոյնը կարգը ունին⁴², եւ զնուատագունիցն զարդուց լուսափայլութիւնս եւ զգալրութիւնս, բայց յետինքն ոչ են հաղորդ նոցա գերակայութեանն⁴³:

Արդ զուրբան, կարգս գերազոյնս էութեանցն եւ զնոսա նրեշտակս կոչեն Աստուածաբանքն, քանզի եւ նոքա պատմիչը են աստուածապետականին լուսափայլութեանց, բայց զիւտին կարգս երկնայնոցն իմացութեանց, ոչ ունի քան անուանել պետութիւնս կամ աթոռս կամ սերովըէս⁴⁴, քանզի ոչ են հաղորդ գերազունիցն զարդութեանց: Այլ որպէս սա զմերս Աստուծով քահանայապետութիւնս ամբառնայ առ ծանուցեալն իր աստուածապետութեանն ճառագայթ, նոյնպէս եւ որ նախ քան զան զբագան(“) զարդութիւնը վերամբարձականը են առ աստուածութիւնն նրեշտակականացն քահանայապետութեանցն զարդուց, բայց միայն անուամբ են հաւասար նրեշտակը. վասն պատզամաւորութեանն: Թէ ո՞վ միշին, կամ ո՞վ առաջին, եւ ո՞վ վերջին կարգը նրեշտակապետացն, զի զուրբան աթոռս եւ զբագմաշեայս եւ զբագմաթեն կարգս սերովըէսն երբայեցցն ձայնի, եւ սերովըէս⁴⁵ անուանեալսն, քան զամենայն գերակայ մերձաւորութեամբն եւ անընդմիշաբար հաստատեալ ասեն, // (140ա) աւանդեալ սրբազնիցն յայտնաբանութիւնք:

Արդ՝ գերրորդականս զայս զարդ, որպէս մի համակարգ եւ արդար եւ առաջին⁴⁶ քահանայապետութիւն ասաց բարեփառ առաջնորդն մեր⁴⁷: Եւ դարձեալ, ասէ, թէ ամենայն երկնայնոցն իմացութեանցն մականունութիւն յայտնումն ունի իրաքանչիրումն աստուածատեսակ առանձնաւորութեանն, եւ զարբոցն սրովըէս անուանակոչութիւնս ասեն, որք

39 Բ - չիք. եւ,

40 Բ - ինքեամք,

41 Բ - էր] է,

42 Բ - ումէին,

43 Բ - գերակայութեամ,

44 Բ - սերօրէս,

45 Բ -] քերովըէս,

46 Բ - առաջի,

47 Բ - մերո.

զերայեցող գիտեն, կամ զկիզիս երեւալ, կամ շեռուցիս, իսկ զքրովբեկցն կամ բազմութիւն գիտութեան, կամ թեղումն իմաստութեան վայելչաբար ուրեմն առաջին քահանայապետութիւն երկնայեցն առ ի զերգոյիցն եւութեանցն սրբազնագծի զայն կարգ ունեղով, որքան զամենայն բարձրագոյն զառ Աստուած անմիշաբար հաստատելն: Եւ զնախազդութիւնս աստուածայնոյն երեւմանց, եւ զկատարմունան ի նա, որպէս հպագոյնս իշխանաբար անցուցանել, զի ի նոսա լիմի առաջին աստուածային երեւմունք:

Արդ՝ շեռուցիչըն իմանին, եւ աթոռն, եւ թեղումն իմաստութեան յայտնաբանականի անուամբ՝ աստուածատեսակաց նոցա ունակութեանց, քանզի մշտաշարժութիւն նոցա աստուածային են, եւ անդադար, եւ շեռուցիչ, եւ սուր, եւ զերագոյն եռանդն զգուշացող⁴⁸: Եւ անթոյլ եւ անխոտոր մշտաշարժութեան, եւ նուաստազումիցն համբարձաբար, իսկ քերովբեկցն զգիտողական նոցա եւ զաստուածատեսական, եւ զերագոյնին լուսաւորութեանց ընդունակ, եւ տեսողական նախագործ զարութեամբ աստուածայետականին վայելցութեան, եւ իմաստացուցիչ հաղորդութեամբ լցեալս, եւ հաղորդական առ պէտո առ երկրորդս հանդիպման, պարզենեցելոյ նմա իմաստութեամբ:

Իսկ բարձրագումիցն, եւ համբարձելոցն աթոռոցն յամենայն հետեւակ նուաստութեան՝ զամիառնաբար համբառնալն, եւ ի բարձրն կոյս զերազարդաբար վերաբերեալ, եւ յամենայն յետնութեան՝ անշեղաբար վերաբնակել, եւ առ արդարեւ բարձրնալն՝ բոլորիւթ զարութեամբ անշարժաբար բարեւաք կարիւ⁴⁹ հաստատեալ: Եւ աստուածայնոյ զալսատեան ամենայն անախտութեամբ, եւ աննիւթութեամբ ընդունական, բայց ասելի է, թէ զի՞նչ համարեսցութ զնոցա քահանայապետութիւն: Քանզի ամենայն քահանայապետութեանց նիմումն⁵⁰ աստուածանման աստուածատեսութեանն՝ յարիհնուածի անշեղաբար գոյն, եւ բաժանել զամենայն քահանայապետական իրողութիւն ի սրբազն հաղորդութիւն, եւ հաղորդեցուցանել անխառն մաքրութեան, եւ աստուածայնոյն լուսոյ, եւ տեսողակաց, ոչ իբրև զգալեաց նշանակաց իմանալի տեսութեանս, այլ որպէս ամենայն աննիւթ գիտութեամ՝ բարձրագումին լուսով լցեալ:

Եւ երեք երեւական տեսութեամբ մինն ասէ: Աւրիմեւալ են փառք Տեառն ի տեղորչէ իրմէ (Եզեկ. Գ. 12), եւ միամ Սուրբ ես⁵¹ (Ես. Զ. 3), իսկ Յոհան Ոսկերեանն, Յանհայցն անուանեալ զիրք, այսպէս ճշմարտէ յաղազս խնդրոյս այսորիկ: Ընդէ՞ր ասա ինձ զթեսն առաջի արկանն սերորդըն, վասն առաքելականին ի լոյս բնակեալ // (140թ) յանմերձանալի գործովքն յառաջաձանն: Ոչ նոքա միայն, այլ եւ որ գեր ի վերոյ են քան զմոսա քերովքն, քանզի քերովբեկն մերձ կամ, իսկ քերովբեկն աթոռ են Աստուծոյ, իբր ոչ եթէ աթոռոյ ինչ կարաւանա Աստուած, այլ զի զառաքինութիւն զարութեանն իմասցիս: Եղեւ ասէ: Բան տեառն առ Եզեկիել՝ որդի Բուզեայ, ի վերայ Քուրար⁵² զետոյն (Եզեկ. Ա. 3): Եւ սա մերձ առ զետն Տիգրիս կայր, յայնժամ եւ զինչ ետես. ահա ամպ ասէ ի հիւսիսոյ զայր, եւ ճառագայթիւթ շուրջ, եւ որ զիետ: Եւ որ միջոցին, նմանութիւն չորից կենդանեաց, եւ

48 Բ - զգուշացօղ,

49 Բ - կարգիւթ,

50 Բ - դիպում,

51 Բ - ս'թես] սուրս սուրբ սուրբ ես,

52 Բ - Քորար,

նմանութիւն մարդոյ ի վերա նոցա և չորք երեսից⁵³ միոյ, և չորք թեւը⁵⁴ միոյ, և բարձրութիւնը էր նոցա (Եզեկ. Զ): Եւ աճաւորք էին, և թիկունք նոցա էին աշաւք շորք զշորեցունց, և ի վերա հաստատութեանն իբրև տեսութիւն շափիւղա քարի՝ ի նմանութիւն աթոռոյ, ի վերա նորա և ի վերա աթոռոյ՝ իբրև տեսակ մարդոյ, զի գորաւիհնակ հրեշտակ ասի. զի յԱստուծոյ առ մարդիկ առաքի պատմաւոյ, և հրեշտակապետն, զի հրեշտակացն իշխէի⁵⁵:

Նորա նոյնական անուն ունին, զիմաստութիւն իրեանց և զմաքրութիւնն մեզ յայտնելով: Եւ որպէս թեւքն զբարձրութեացց⁵⁶ երեւեցուցանելով զբնութիւնն, զի և Գարդիլ թոռուցեալ երեւեցաւ, իբր ոչ եթէ թեւք են հրեշտակապետին, այլ զի ուսցիս եթէ ի բարձրագումիցն տեղեացն ի մեր բնութիւնս էջ, նոյնական և նոցա ոչ այլ ինչ զեկուցանեն թեւքն: Եւ զոր արինակ, թեւքն զբնութեանն բարձրութիւնն յայտնեն, և աթոռն Աստուծոյ ի նոսա հանգելն, և աչքն գտեսողականն, և մերձ լինելն յաթոռն, և յարաժամ, զան աւրինելն, զարթնութիւնն և զիսկունն, նոյնական անուանքն կիսոց զիմաստութիւնն, և կիսոց զմաքրութիւնն յայտ առնեն, քանզի զի՞նչ է քերորէ՛ յաճախութիւն զիտութեան, և զի՞նչ սերորէ՛ հրեւեն բերան: Տեսէ՞ր զիարդ զմաքրութիւն և զիմաստութիւն անուանցն յայտնեաց:

Արդ, զոր սուրբն Դիտնեսիոս համակարգեաց զերորէս, և զերորէս, և զաթոռն, երիցս երանեալը⁵⁷ երջանիկն Յոհան զատուց զերորէսն, և զերագոյն ասաց անուամբ և իրաք, քանզի յաճախութիւն զիտութեանն, և աչքն յամենայն կողմանց զնոյն նշանակեն: Զնոյն և երանեին Կիրեղ Ս.ղէքսանդրի հայրապետն ի մեկնութեացն Եզեկիլի, ասէ. Այժմ մեզ և զերեւեալն նմա զկենդանեացն ձեւ, ասէ. Այս է տեսիլն նոցա⁵⁸ նմանութիւն մարդոյ ի նոսա, և չորք երեսք միոյ, և չորք թեւք միոյ, և բարձր նոցա ուղղորդը⁵⁹, և ուոց նոցա թեւաւորք, և ձեռք մարդոյ ի ներքոյ թեւոց նոցա, ի չորեսին կողման⁶⁰ իրեանց: Արդ՝ տեսակ երեւում[ին] ուղղորդ լինել ասէ, և մարդանման չորեքիմի իրաքանչիր, և չորեքթեւեան հաւասարաթեւ զթեւսն ասաց, և զձեռոն, ասէ. լի թեւաւք լինել, և զոտսն յայտնէ՝ թուով երեսացն, և թուոցն զաստուածալին զկուտսն բերորացն զարութեանցն զամենաթագաւորիմ՝ Աստուծոյ զամենամերձ երեւմանն: Իսկ ի ներքոյ թեւոցն նշանակէ զբնութեամ⁶¹ նոցա զարգութիւնն, // (141ա) իսկ պայծառագոյն նմանեցուցանել զփայլումն զերեւելի հմաստիցն նշանակէ զսրութիւն, քանզի ասաց. Եթէ փալլակնացայտ իբրև զփայլին աղճայ, իսկ ներքոյ թեւոցն ծածկեալ ձեռքն զաներեւոյթ, և զպէսակս ներգործութիւն, և նմանութիւն ասէ երեսաց նոցա Դէմք մարդոյ և դէմք⁶² աղիծու յաշմէ: չորեցունց, ի ձեռն այսոցիկ⁶³ ակնարկէ զթագաւորութիւնն, զի թագաւորական է կենդանին:

53 Բ - երեսք,

54 Ա - երեսք,

55 Բ - իշխանք,

56 Բ - զբարձրութիւնն,

57 Բ - երանեալ,

58 Բ - չիք. տեսիլն նոցա,

59 Բ - ուղղորդ,

60 Բ - կողմանց,

61 Բ - զբնութիւն,

62 Բ - դէմք,

63 Բ - այնոցիկ.

Վասմ⁶⁴ եղին՝ զքահանայութիւն, քանզի վասն քահանապականի մատուցանի գուարակ⁶⁵. Վասն արծուին՝ զմարգարէութիւն, քանզի բարձրաթռիչ է կենդանին և յոյժ սրատէս, այսպիսի է մարգարէութիւն՝ բարձրագոյն ունեղով գտնութիւն: Եր ի հեռուստ զինեղոցն հայախտեսակ ուսուցանէ ի ձեռն ասացելոց, վասն զի ամենայն մարդկային բնույթին հանդերձ իրով զիսաւորան ամենաբազաւորին բոլորեցուն հնազանդեալ է: Եր ահա ի վերա քան զիսաւուսութիւնն, որ ի վերա զիսոյ քերովքէիցն, որպէս և գտնակ շափիւղայ ի հնանութիւն աթոռոյ: Աստանաւր յայտնի այնունենու, ետեւ զկենդանիսն քերորէսն անուանեալ:

Նշանակէ անունն, որպէս ասաց բազմութիւն զիսութեան, և ասաց առ այրն, որ զգեցեալ էր զարդողնն մուտ ի մէջ անուանցն, որ ի մերքը քերորէիցն: Եր լից զրուն քո կայծակամքը հրոյ ի միջոյ քերորէից, և ցանես⁶⁶ ի վերա քաղաքիդ, և նմուտ առաջի իմ: Եր քերովքէն կային ընդ աշմէ տան ի մուտանէ լետոնն⁶⁷, և ամպ եկից զսրահն ներքին զիտել արժան է, զի ոչ միոյ ի քերովքէիցն հրամայեաց մերձենալ, այլ որ զքահանայականն զգեցեալ էր զարդողնն: Ահա աստ յայտնապէս մեկնէ, զոր խնդրեմքս, քանզի զոր սուրբն Դիոնիսիոս երրորդական, և գերակատար կատարողապեսութիւն ասաց, և անխառնանմանից և կարող զայլս ի հաղորդեցուցանել ինքնան լուսոյն: Մարգարէն քահանայական զգեցեալ, ետեւ Աղաքրողն և ամենայն սուրբ հայրապետացն պաշտան քահանայական անուանը պաշտին ի սուրբ եկեղեցին⁶⁸: Եր մարգարէին նախաձայնել⁶⁹, քահանայք քո զգեցցին զարդարութիւն: Եր Մովսէսն և Ահարոն երիցունք⁷⁰ նորա:

Այլ Մովսէսն ընդ Աստուծոյ բերան ի բերան խաւաէր, և իւղոյն ամեման և արինացն բերաւ: Ուստի քահանայքն եւ մարգարէն, եւ թագաւորըն աւծանէին, զան քերովքէն, իսկ որ [...] կատարին ի նոսա որ զքահանայական էր զգեցեալ, նմա⁷¹ հրամայեցաւ սպասաւորութիւնն այն: Նաև կերպարանքն իսկ քերովքէիցն, առիւտուն⁷² զթագաւորութիւնն, և եզինն՝ զքահանայութիւնն, և արծույն⁷³ զմարգարէութիւնն: Որպէս և սուա իւղն այն սուրբ յածումն, սուա երիցդ այդոցիկ, որպէս և յառաքեականն ասէ, թէ անդէն ի նմին ժամու առաւատուն մեծի կիւրակէին ամբարձեալ զձեռն իր տեսունն եղ ի վերա զիսոյ մետասան աշակերտացն շնորհեղով նոցա զաշտիճանն քահանայութեան: Եր դարձեալ, թէ ընկալան զքաջ քահանայութեանն, իբրև զՄովսէս. և զԱհարոն, զի խորհուրդ տէրունական մարմնոյ և արեանն⁷⁴ նովա կատարի, և խաչն նովա արինի, և երկրպագի: Եր յորժամ յաղազ // (141թ) Արտաշիրի թագաւորի Հայոց ժողովոցն նախա-

⁶⁴ Բ - վասմ] զի.

⁶⁵ Ա - զուր"կ.

⁶⁶ Բ - ցանեցես,

⁶⁷ Բ - մուտանէ [խառնն] մուտանէ առն,

⁶⁸ Բ - եկեղեցի,

⁶⁹ Բ - նախաձայնեալ,

⁷⁰ Ա - իրիցունք,

⁷¹ Բ - նմա] կամ,

⁷² Բ - առիւտուն,

⁷³ Ա - արծուն,

⁷⁴ Բ - արեան,

րարք Հայոց առ սուրբն Սահմակ, զի միաբանեսցի ընդ ճոսա, տարամերժել զնա ի թագաւորութենմէն⁷⁵ յաղազս անառակ պողովական գործոյն, մատնելով թագաւորին Պարսից Վուամա, իբրև ոչ առ յանձն միաբանեալ ասէն, թէ փոխանակ զի ոչ լուար բանից⁷⁶ մերոց, և ի միաբանութենէս մերմէ զանձն ի բաց մերժնեցեր: Գիտասչիր, զի որպէս եղեալ էր ի մտի շթագաւորել նմա ի վերա մեր, շանամք⁷⁷ քահանայանալ եւ ոչ քեզ առ յերկարսն⁷⁸ ի վերա մեր: [.....] համազգի էր սր⁷⁹ [.....] ի⁸⁰ վեցերոդ ի նմանէ նորին պատուով եւ առաջնութեամբ զարդարեալ, և քահանայական անունն⁸¹ ոչ էր⁸² թշնամանք կաթողիկոս անունն⁸³: Եւ Քրիստոսի իսկ ասաց մարգարէն. Դու ես քահանայ յալիտեան (Սահմ. Ծթ. 4), իսկ⁸⁴ առաքեալ միայն զպետն յանել, եթէ՝ այլ Քրիստոս եկեալ քահանայապետ (Եբր. Թ. 11): [Ել] արդ՝ եթէ ի վայր խոնարիի կաթողիկոսութեամն⁸⁵ պատիր քահանայական անուամբն, զի զի՞նչ է քահանայ. քաիչ մեղաց⁸⁶ ժողովրդեանն: Եւ քաիչն սրբէ եւ սերովբէին անունն կիզիչ, նոյն է սրբիչ, զի որպէս հուրն ծախտ եւ հալէ զադու⁸⁷ արծաթոյն, եւ զուկոյն⁸⁸, եւ թագաւորական թագին, արժանի առնէ նոյնպէս եւ քահանայն իլրով սուրբ Վարիւթ: Եւ Վարդապետութեամբն կիզու զմեղաց⁸⁹ ժողովրդեանն, եւ գերակատարին արժանի առնէ: Սուրբ քահանայապետին Քրիստոսի, զոր եւ սուրբն Դիոնէսիոս ասաց, թէ ըստ ամենայն սրբազն զարդուն գերազանցազոյն կարգըն ումին, եւ զնուաստագումիցն զարդուց լուսափայլութիւնս եւ զզալութիւնս, բայց յետինքն ոչ են հաղորդք նոցա գերակայութեամն:

Եւ արդ՝ ոչինչ է սքանչելի, թէ քահանայական անուամբ լիշին ուրէք, եւ ոչ անկումն նոցա ի պատույն իրեանց, զի եւ ոչ Մովսէս եւ առաքեալքն, եւ սուրբն Սահմակ անպատուեցան, եւ անկանի հայրապետականն կարգէ: Տեսցուք զեպիսկոպոսական եւ զկաթողիկոս⁹⁰ անուամբն, թէ որպէս ընկալեալ զիւրաքանչիր զպատիս, եւ հասին մինչեւ ի մեզ: Թէպէս եւ այդու ամենայնին, յայտ եղեւ, բայց եւ այլ յայտ եկեսցեն, եւ նախ Դաւիթ առաջնորդեսցէ բանիս, որ ի նոյն ինքն Աստուծոյ ունին զվկալութիւնն, թէ գտի զնաիթ, որդի յեսսեա' այր ըստ սրտի իմում (Գործ. ԺԳ. 22): Եւ որ աւծաւ յԱստուծոյ արժանապէս, եւ առ

⁷⁵ Բ - թագաւորութենմէ,

⁷⁶ Բ - ձայնից,

⁷⁷ Բ - քանամէ,

⁷⁸ Բ - չիք. եւ ոչ քեզ առ յերկարսն,

⁷⁹ Բ - սրյան,

⁸⁰ Բ - չիք. ի,

⁸¹ Բ - ամուն,

⁸² Բ - էր+ոչ էր+,

⁸³ Բ - ամուանն,

⁸⁴ Բ - +ըստ կարգին+ իսկ,

⁸⁵ Բ - կաթողիկոսութեամ,

⁸⁶ Բ - չիք. մեղաց,

⁸⁷ Բ - զախտ,

⁸⁸ Բ - զոսկույն,

⁸⁹ Բ - զմեզ,

⁹⁰ Բ - զկաթողիկոսական,

Սատու, և առ ամենայն Խրակէ, բարերար և կենաց չափ երախտար, և այսոյն Սատունայի հալածիչ: Եթ արեն ուներ ակն ընդ ական, և ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, և ուն ընդ ոսին, այլ Սատու զերախտաւորն զիւր և զկենաց տուիչ: Եթ յահագին բռնութենմէ պատյն զդիւրացուցիչն հանապազ ջանայր կորուսանել, և նա զքազում անզամ ի նորա ձեռ զտուեալն, և յիւրոցն քաջալերեալ պահանել զմահու արժանաւորն, և յերկիրէն անկասկած մնալ, և թագաւորութեանն ժառանգորդ լինել:

Զի՞նչ առներ պատակսանի, թէ Քամ լիցի ինձ արկանել ձեռս յատճեալն Տեառն, և արիս անարինաց եցէ, և ձեռն ին⁹¹ իմ մի եղիցի⁹², որպէս եղեւն, իսկ ինքն իր անարիւնութեամբ սրովն, //142ա) որով զնա ի մահն որսայր, անձինն արարեալ, վճարեաց զկեանս: Եթ զքազաւորութիւնն նա էառ, որում⁹³ Աստուսած եղեւ ամժանդակ, որ ասաց իսկ Եղից զագնութիւն ի⁹⁴ Վերա հզարին (Սաղմ. ԶԸ. 20): Եթ բարձր արարից զընտրեալսն ի ժողովրդնենէ ինմէ, և որ օնայն հակառակեաց յափշտակէլ զքազաւորական պատիմ՝ յափշտակեցաւ ընդ երկինն և ընդ երկիր (Բ Թագ. ԺԸ. 9-10):

Եթ վկայէ կաղմնին, որ զերացն բռնաթարեաց, և արդ՝ եկեսցեն սուրբ հայրապետացն հոյլը ի մէջ մանաւանդ Սուրբ Հոգոյն շնորհացն հոյլը. և հանցեն զմեզ յանմոլար ճանապարին: Եթ եղից նախ առաջին զկոլմ⁹⁵, որ յառաքեական դասուն երեւի ԼԲ. (32) համարին:

Զեպիսկոպոս նախ գիտել պարտ է գաւառին առաջին, և համարել զնա իբրև զգիսաւոր, և ոչ ինչ գրոծել առանց նորա, այլ եւ նա առանց նոցա կամաց՝ այսինքն եպիսկոպոսացն, և այս յայտ է, թէ եպիսկոպոս է, այսինքն՝ կաթողիկոս: Զի և Դիտմիսիոն զերկնայնցն պետութեանցն ասաց, թէ հրեշտակի անուամբքն ամենայնքն համապատիւք են, բայց ամենայն դասուն պես երեւի, նաեւ յերկնայն հեծելազար զարականացն հոյլս պէտք երեւին մեծամեծք և փոքրունք, որ ամենեցուն յայտնի են, և ոչ կարեն ըստ չափ անցամել, և որք անցանեն պատժոց ակն ունին:

Ի Նիկիա սուրբ ժողովոյն այսպէս ասէ ի Դ. (4) համարին, վասն եպիսկոպոսաց արժանաւորը վիճակին, որք յաշխարհին եպիսկոպոսքն իցեն նովիմք նատուցանել յարուն, ապա եթէ վասն փութոյ ինչ վասն նեռաւորութեան ընկերացն երեք եպիսկոպոսք կամ այնցիկ, որք ներին են՝ թխտովք վկայութեամբ նատուցանելոց զպատիս: Եթ զշնորհս գլխաւորին արժան է տալ, այսինքն՝ կաթողիկոսն⁹⁶ լԱնտիոքայ սուրբ ժողովոյն զի՞նչ սահմանեցին ի Ժ. (10) համարին, որք յիւրաքանչիւր յիշխանութեան եպիսկոպոսք են: Ցիմացին⁹⁷, զի մայրաքաղաքաց եպիսկոպոսքն թիկունք է⁹⁸ նոցա, և հոգաքարձու: Եթ ամենայն ո՞ք, զինչ և պատասխանի կամեացի առնուլ՝ առ նա ընթանալ: Եթ մուրիակ արքունի, և թէ

⁹¹ Բ - չիր. իմ,

⁹² Բ - եղիցի] մեղիցէ,

⁹³ Բ - որու,

⁹⁴ Բ - +իմ+ ի,

⁹⁵ Բ - զկոլմ,

⁹⁶ Բ - կաթողիկոսին,

⁹⁷ Բ - իմասցին,

⁹⁸ Բ - էլ են,

աշխանաց, վասն իրաց եկեղեցոյն, և կարգաց հասարակաց: Վասն այսորիկ կամ եղեւ, զի պատուվ յառաջ իցէ, և առանց նորա մի ոք իշխեսցէ զործել ինչ ըստ նախնացն սովորութեան հարցն մերոց, որպէս կարգեալ են կանոնք, բայց միայն զայս իշխեսցեն յիրում աշխանութեանն, եթէ գեաւոք, և եթէ գաւառը ամսունք սարկաւագաց, և երիցանց, կամ դի՞ն վարք իցեն իրոյ գաւառին եւ իշխանութեանն, ամենայն հոգաբարձութեամբ ընտութեամբ⁹⁹, և խնամով գործիցէ, այլ այլոց ամենենին մի իշխեսցէ զործել, և ձեռնամուխ ինել, բան զկամս մայրաքաղաքաց եպիսկոպոսացն, և ոչ նմին կաթողիկոսին, առանց հաւասարութեան այլոց եպիսկոպոսացն զործել ինչ ժբ. (12) համարին:

Եւ դարձեալ, թէ եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ, կամ ո՞վ և իցէ՝ արտաքոյ¹⁰⁰ զկամս, որ գաւառին եպիսկոպոսն իցէ, և կամ, որ մայրաքաղաքացն իցէ, և դիմեսցէ առ թագաւորն, զայնպիսին ցոյց արացեն, և ընկեսցեն, և մերժեսցեն ոչ միայն ի հաւասարութենէ, այլ եւ ի պատույն, եւս զոր ուներ, զի ի՞ր եւ ձանձրացուցանել կամեցալ // (142ր) գաստուածաւէր թագաւորին մերոյ զլսելիս արտաքոյ զկարգ եկեղեցոյ, ապա թէ հարկ ոնչ իցէ իրաց և ոչ առ թագաւորն դիմել, զործեսցէ խորհրդով և կամաւը ըստ իշխանութեանն, որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն իցէ, նոցին թխոտով¹⁰¹ գուշակեսցի ճանապարհն, յոր դիմեաց ժողովոյն, որ ի Սարդիկէ Դ. (4): Գուգենատիոն եպիսկոպոս ասէ, զի թէ որ յեպիսկոպոսաց՝ ի կարգէ եպիսկոպոսացն ի բաց անկցի, դատավճիռ եպիսկոպոսաց¹⁰², որ դրացիքն են, և ասասցէ միւսանգամ իրոյ պատասխանատութեան իրս:

Պարտ է ի ներքս բերել, մի ոք իշխեսցէ զայլ ոք յաթոռս նորա կարգել, մինչ ոչ¹⁰³ Հռոմայ եպիսկոպոսն զիտասցէ, և վասն այնորիկ յառաջ բերիցէ Է. (7) համար:

Ոսիոն եպիսկոպոս, ասէ. Հայոց թուեցաւ, զի թէ ոք եպիսկոպոս ամբաստանեսցի, և ժողովեալ եպիսկոպոսունքն նորայն զաւառի, և նա ապահնեսցի առ երանելին Հռոմայ եպիսկոպոսն, և կամիցի լսել զնորա դատատան, և իրաւացի կարծիցէ նորոգել զնորա իրաց հարց և զբնին գրել արժան է առ եպիսկոպոս այնոցիկ, որ մատիցն յայն զաւառ, զի և նոքա զգուշութեամբ և մեզութեամբ մի ըստ միոչէ քննեսցեն, և ըստ ճշմարտութեանն հաւատոյ զդատավճիռն ի վերա ածիցնեն:

Եւ թէ ոք դարձեալ աղաչիցէ, և միւսանգամ զիւրն լսելի արասցէ, և իրոյ խնդրուածին զՀռոմայ եպիսկոպոսն շարժել¹⁰⁴ լիւրմէ կողմանէ, զերիցունս արձակիցէ իշխանութեամբ եպիսկոպոսութեանն իրոյ, զոր բարեաւը¹⁰⁵ գոլ փորձիցէ, սահմանիցէ, եթէ պարտ է առաքել, որ ընդ եպիսկոպոսացն զդատն ասիցէ, ունելով զիշխանութիւն նորա: Վասն որոյ առաքեցաւ, և այս խնդրելի է սոցա, թէ բովանդակ կարծիցէ առ ի յետին զիտութիւն, և սահմանադրութիւն զեպիսկոպոսացն արասցէ¹⁰⁶, զոր ինչ նոքա իմաստազաւր խորիցը-

⁹⁹ Բ - չիք. ընտրութեամբ,

¹⁰⁰ Բ - արտաքոյ+բան+,

¹⁰¹ Բ - թոյթով,

¹⁰² Բ - եպիսկոպոսացն+այնոցիկ+,

¹⁰³ Բ - ոչ] որ,

¹⁰⁴ Բ - շարժեալ,

¹⁰⁵ Բ - բարութ,

¹⁰⁶ Բ - չիք. արասցէ,

դոյլ¹⁰⁷ բարիոց¹⁰⁸ գոլ թուեսի: Ակակայ առ Պետրոս թուխա¹⁰⁹ կարդացի եւ ընդունին զամենայն, զոր ինչ յառաջագոյն գրեալ էր, եւ յայս թղթի¹¹⁰, զոր գրեաց ձեռն քո հայր Պետրոս, եւ զլուխ եպիսկոպոսաց, եւ հայրապէտ Աղեքսանդրացոց՝ Է. (7). Պետրոս հայրապէտ Աղեքսանդրացոց առ Ակակ զլուխ եպիսկոպոսաց, որ են ի Կոստանդնուպալիս թ. (9), Պետրոս հայրապէտ Աղեքսանդրացոց առ Ակակ՝ պաշտամակից իմ եւ ընկերածից, եւ հայրապէտ եպիսկոպոսաց, որ են ի Կոստանդնուպալիս:

Կարծեմ, թէ արդար պարտեցար ի գերազումէն այնորիկ զամէ, եւ ի քո ամեսանելոյ, զի¹¹¹ ոչ սատանայ թէպէտ եւ Ամանանու մաշեալ ոչ եթաս որով, քան զինքն վեհագոյն էին, այլ եւ ի Վայր իսկ կործանեցաւ: Եւ անունն իսկ խրատեսցէ զքեզ, որպէտ եւ երկնային պետորեանցն, որ վերագոյնան ճառեցան, զի եպիսկոպոս՝ տեսուչ եւ կաթողիկոս առ բոլորեսին պետարեալ ունի զանուն, զի զլուխ է եպիսկոպոսացն ամենեցուն, որպէտ կաթողիկէ անունանեալ թուղթքն, զի ոչ մասամբ ի¹¹² մի զաւառ կամ քաղաք, այլ ընդհանուր տիեզերաց: Աստանար եկեսցէ բանս ի կատարումն, բաւական համարեալ զասացեալսդ. զաւակա ի բազմաց առ ի յանդիմանութիւն այնոցիկ, որք այնպէսն խորին, եւ լինի այսպիսի ի հմացմունք, յորժամ մարդկային փառաց որ ցանկանացէ // (143ա) չիք ինչ չա՛ր քան զիպարտութիւն: Լա՛ է մորոսութիւն, քան զիպարտութիւն, զի մորոսութիւն միայն յանմութենմէ է, եւ աստ ես չար մորոսութիւն եւ մոլորութիւն, յորմէ զմեզ¹¹³ փրկեսցէ Քրիստոս յոյսն մեր. որում փառք եւ զարութիւն յափտեանս¹¹⁴:

ՀԱՅԵՆԱԿՐԱԿԱՆ ՔՆԱԳԻՐՐ
կազմեց Ա. Ա. Բողոյանը

¹⁰⁷ Բ - չիք. խորհրդոյ,

¹⁰⁸ Բ - բարտը,

¹⁰⁹ Բ - թուղթ,

¹¹⁰ Ա. - թյսթի,

¹¹¹ Բ - զի+եւ+

¹¹² Բ - ի լան,

¹¹³ Բ - չիք. զմեզ,

¹¹⁴ Բ - յափտեանս+ամէն+